ՌԴ Արխանգելսկի մարզի պատվիրակությունը՝ ՀՀ Վայոց ձորի մարզում,

04.11.2015

Օրերս ՌԴ Արխանգելսկի մարզի պատվիրակությունը, Արխանգելսկի մարզի նահանգապետ Իգոր Օռլովի գլխավորությամբ, ՀՀ Վայոց ձորի մարզում էր: Ռուսական պատվիրակության մեջ ընդկրգված էր նաև Արխանգելսկի պատգամավորների մարզային ժողովի նախագահ Վիկտոր Նովոժիլովը և բարձրաստիճան այլ պաշտոնյաներ: Տեղեկացնենք, որ Արխանգելսի նահանգի պատվիրակությունը Հայաստան է ժամանել 4-րդ հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովի շրջանակներում:
Պատվիրակությունը ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի ուղեկցությամբ այցելեց Մալիշկայի համայնք: Գյուղի Սբ. Աննա եկեղեցու բակում տեղի ունեցավ ուղղափառ խաչի բացման հանդիսավոր արարողություն: Նշենք, որ Արխանգելսկ քաղաքում տեղի իշխանությունների նախաձեռնությամբ Սբ. Աստվածածին ուղղափառ եկեղեցու բակում տեղադրվել է հայկական խաչքար:
Այնուհետև պատվիրակությունն այցելեց Մալիշկայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց, որը 2013 թվականից կրում է ռուս ականավոր և աշխարհահռչակ գիտնականի անունը: Անվանակոչումն իրագործվել է ՀՀ Վայոց ձորի և ՌԴ Արխանգելսկի մարզերի միջև Առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության 2012թ. համաձայնագրի շրջանակներում:
Մալիշկայի Վ. Լոմոնոսովի անվան դպրոցի տնօրինությունը հյուրերին ողջունեց փոքրիկ համերգային ծրագրով, որի ընթացքում միախառնվել էին հայկական և ռուսական ազգային երգն ու երաժշտությունը, հայ և ռուս ազգերի բարեկամության մասին պատմող բանաստեղծությունները և համերգը ներկայացնող դպրոցի աշակերտների խանդավառությունը:
Նոյեմբերի 3-ին Երևանում անցկացված 4-րդ հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզի և ՌԴ Արխանգելսկի նահանգի միջև ստորագրվեց Առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության համաձայնագրի իրագործման 2015-2017 թ.թ. միջոցառումների ծրագիրը:

Համաժողովի շրջանակում նոյեմբերի 3-ին ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի հետ ՌԴ Արխանգելսկի նահանգապետ Իգոր Օռլովի և Յարոսլավի նահանգապետ Սերգեյ Յաստրեբովի հանդիպմանը, որին մասնակցել է նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, քննարկվել են ՀՀ մարզերի և ՌԴ նահանգների միջև առևտրատնտեսական, գիտակրթական, մշակութային կապերի աշխուժացմանը և սերտացմանը, սպորտի և զբոսաշրջության ոլորտներում համագործակցության զարգացմանը վերաբերող հարցեր: